

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ԿԵՐՊԱՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Բանալի բառեր: Պատմագրություն, պատմական կերպար, գեղարվեստականացում, հեքիաթ, պատմավեպ, պատմավիպասան, պատմական գունդերանգ, դիպաշար, էպիկական, վիպերգ, լեզվաոճավորում, կերպարների տիպականացում:

Հայ գրականության պատմությունը հարուստ է պատմական դեմքերի, իրադարձությունների ու ժամանակաշրջանների գեղարվեստականացման բազմաթիվ օրինակներով: Դրանք էական նշանակություն ու կարևորություն են ձեռք բերում ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի տիպականացման ու հերոսների անհատականացման առումով, այլև ելակետային դրույթներ են դառնում ներկա իրադարձությունները դիտելու պատմական տրամաբանությամբ, նրա ծագումն ու հեռանկարը գնահատելու պատմության դասերով: Գրականագետ Ս. Սարինյանը՝ խոսելով պատմականության մասին, ժամանակին նկատել է. «Պատմականությունը գեղագիտական կատեգորիա է, որ գոյանում է կառուցվածքային բոլոր տարրերի, ձևի ու բովանդակության բաղադրիչների ներքին միասնությունից: Այս տեսակետից պատմականությունը ստանձնում է գեղագիտական կարևոր ֆունկցիա և մեծապես պայմանավորում երկի գեղագիտական-փիլիսոփայական տարողությունը»: (1) Գրողներն իրենց երկերում հավատարիմ մնալով պատմական իրողություններին, դրանք վերարտադրում են յուրովի: Անցյալի սեղմ ու ժլատ փաստերը ստեղծագործողների գրչի տակ վեր են ածվում մեծակտավ գործերի, որոնցում վառ երևակայության, պատկերավորման-արտահայտչական զանազան միջոցների, լեզվաոճական հնարանքների կիրառությամբ հաջողվում է ստեղծել տվյալ ժամանակաշրջանի կոլորիտային պատկերն ու հերոսների տիպական կերպարները: Այդպիսիք են հայ գրականության նախընթաց փուլերում ստեղծված Վարդանի ու Վարդանանց հերոսների կերպարները Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում, Արշակ երկրորդի կերպարն ու 4-րդ դարի պատմա-քաղաքական իրադարձությունները, անցքերն ու դեմքերը Բաֆու, Ստեփան Ջորյանի, Հայկ Խաչատրյանի, Պերճ Ջեթունցյանի, Լևոն Խեչոյանի և այլոց պատմավեպերում: Գրականագետ Ն. Գեյրը նկատել է. «Մեր ժամանակներում կերպարի, պատկերի ժամանակային ըմբռնումը սերտորեն կապված է գեղարվեստական գրականության մեջ առկա ժամանակի և տարածության խնդիրների հետ: Դրանք դառնում են յուրօրինակ տարածություն և միջոց՝ դեպքերի ծավալման և կերպարի ինքնակայացման համար»: (2)

Վաչագան Բարեպաշտ թագավորի կերպարը մեզ հայտնի է առաջին հերթին պատմագիտական աշխատություններից՝ Մովսես Կաղանկատվացի «Պատմու-

*Հոդվածն ընդունվել է 20.10.2018թ.:

Հոդվածը տպագրության է ներառվել Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնը:

թյուն Աղվանից աշխարհի», Ստեփանոս Օրբելյան «Պատմություն տանն Սիսական», ինչպես նաև ժողովրդական ավանդություններից: Ըստ պատմիչ Կաղանկատվացու՝ Վաչագան թագավորը գահակալել է Աղվանքում, այսինքն՝ Արցախի և Ուտիքի շրջաններում սկսած 480-ական թվականներից: Գահ բարձրանալով երկրամասում ավելի քան երկու տասնամյակ տիրած անիշխանությունից հետո, Պարսից արքա Վաղարշի օրոք (484-488), նա ամրապնդում է Արցախ-ուտիքյան իշխանությունը՝ այն հռչակելով թագավորություն: Թագավորանիստ է դարձրել Գյուտական ավանը: Վաչագան թագավորը ծավալել էկեղեցական, լուսավորական և քարոզչական բուռն գործունեություն: Թագավորության վարչական հիմքերն ամրապնդելու նպատակով ձեռնամուխ է եղել ներքին կարգն ու կանոնն ապահովող օրենքների մշակմանը: Նրա նախաձեռնությամբ հրավիրվել է Աղվեցի ժողով, որտեղ էլ ընդունվել է «Սահմանադրություն կանոնականը»: Վաչագան արքան թաղվել է իր կառուցած Ջրվշտիկ վանքի մոտ: Նրա գերեզմանին 1286-ին կառուցվել է մատուռ:

Այդուհանդերձ, անժխտելի է այն իրողությունը, որ մեր պատմիչների հաղորդած տվյալներից զատ, Վաչագան Բարեպաշտի կերպարն առավել ամբողջական էղառնում գեղարվեստական երկերի քննման զուգահեռներում: Պետք է ասել, որ, ըստ էության, Վաչագան Բարեպաշտի կերպարի ընկալումը ժամանակի հոլովությամբ գրեթե անփոփոխ է մնացել: Սակայն կախված ժամանակի հրամայականից, հեղինակների սուբյեկտիվ մոտեցումներից, այն ունեցել է յուրովի վերարտադրություններ ու դրսևորումներ՝ ինչպես բովանդակային, այնպես էլ ժանրային ձևային առումով:

Հայտնի է, որ Վաչագան Բարեպաշտի կերպարն առաջին անգամ գեղարվեստորեն մարմնավորվել է բոլորիս հայտնի ու սիրված Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթում: Հետագայում պատմավիպասան Հայկ Խաչատրյանն առավել ընդգրկուն ձևով է ներկայացրել Վաչագան թագավորի կերպարն իր «Վաչագան» պատմավեպում: Վաչագան թագավորի հերոսական կերպարին անդրադարձել է նաև բանաստեղծ Վարդան Հակոբյանն արցախյան գոյամարտի տարիներին իր «Տաճարն Աստծո» վիպերգում: Իսկ բոլորովին վերջերս արձակագիր Բակուր Կարապետյանը ընթերցողի սեղանին դրեց «Վաչագան Բարեպաշտ թագավոր» (3) պատմավեպը, որտեղ հեղինակը ներկայացնում է պատմական նորահայտ դրվագներ ինչպես Վաչական Բարեպաշտի գործունեությունից, այնպես էլ Հայոց հյուսիս-արևելքում տիրող պատմաքաղաքական իրադարձություններից:

Այսպես՝ Ղ. Աղայանը հեքիաթում պատմում է մի ժամանակաշրջանի մասին, որ անմիջապես հաջորդել է Հայաստանի և Հայոց Աղվանաց թագավորության համար կարևորագույն իրադարձությունների՝ Վարդանանց ու Վահանանց, Վաչեի կողմից մղված պատերազմներին, քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունմանը, աղվանաց գրերի ստեղծմանը: Աղայանի «Անահիտ» հեքիաթում Վաչագանն արդեն այն արքան է, ով երկրում, բանիմացության ու իմաստնության շնորհիվ, զարգացնում է կրթությունն ու լուսավորությունը, ուն օրոք ժողովուրդն ապրում է առատության ու խաղաղության պայմաններում:

Հեքիաթում առավել փառաբանվում է Անահիտի իմաստնությունն ու գեղեցկությունը: Անահիտը, բացի հայոց գերագույն աստվածուհուն խորհրդանշելուց, ներկայացնում է նաև «Անահիտ» տեսակի գորգը, Աղայանը շեշտում է հատկապես հերոսուհու սերը գորգագործության և, առհասարակ, արհեստավորների հանդեպ: Հաշվի առնելով, որ գորգագործության արհեստը կապվում է հայերի ետ

և բնորոշում է նրա հայկականությունը, Ամահիտին կարող եք վերագրել հեքիաթում հայկական ոգու մարմնավորողի դերը ևս:

Ընդհանրապես, հեքիաթում որպես բանահյուսական ժանրի ստեղծագործության մեջ, կարող է և չպահպանվի պատմական փաստերի ու իրողությունների հավաստիությունը: Այսինքն, դա առաջնահերթ պայման չէ հեքիաթի համար: Ահավասիկ, Աղայանի հեքիաթում նկատում ենք մի շարք փաստական անճշտությունների: Այսպես՝ հեքիաթում Վաչագանը Վաչեի որդին է, մինչդեռ պատմագրության մեջ Վաչագանը Վաչեի եղբոր՝ Յազկերտի որդին է: Մեր պատմավիպասանները՝ Յայկ Խաչատրյանը, Բակուր Կարապետյանը, հավատարիմ են մնացել պատմագրական այս իրողությանը:

Հանրահայտ է բոլորիս հեքիաթի սյուժեն, անդրադառնանք մյուս գեղարվեստական գործերի վերլուծությանը, որոնցում գեղարվեստորեն հյուսված է Վաչագանի հերոսական կերպարը, և փորձեն հընթացս՝ անհրաժեշտության դեպքում, զուգահեռներ անցկացնել այդ երկերի և դրանց հեղինակների մոտեցումների միջև:

Անդրադառնանք Յայկ Խաչատրյանի «Վաչագան» պատմավեպին: Ի դեպ, ուշագրավ է այն փաստը, որ գրողին հաջողվել է վարպետորեն կերտել մեր գրեթե բոլոր արքաների կերպարները՝ պատմավիպական մեծակտավ գործերում՝ Տիգրան Մեծից, Երվանդ Սակավակյացից, Արտաշեսից, Արտավազդից մինչև Վաչագան: Ասել է թե՛ նա մեր պատմական անցյալի ուսումնասիրությամբ գրեթե անգերազանցելի է: Գրականագետ Սևակ Արզումանյանը գրել է. «Հեռավոր անցյալի քաջիմացությամբ, հեթանոսական դարերի դիմամիկան, ռիթմը զգալու և արտացոլելու հմտությամբ քիչ հեղինակներ (պատմաբան թե գրող) կարող են չափվել Յ. Խաչատրյանի հետ»:(4)

Գրողը նպատակ է ունենցել վեր հանելու պատմական հերոսների բնավորության այն էական գծերն ու առանձնահատկությունները, որոնք դարեդար, սերնդեսերունդ փոխանցվել են և այսօր մեր ժողովրդի խառնվածքի միջուկն են կազմում:

Վեպը սկսվում է Ավարայրի դաշտի նկարագրությամբ՝ ճակատամարտից հետո, ամենուր՝ դիակներ, վիրավորներ և նրանց մեջ՝ արցախեցի Բակ իշխանը, ով փնտրելով ու գտնելով Վարդան Մամիկոնյանի սաղավարտը, իր փոքրաթիվ զորքի հետ աճապարում է Արցախ՝ իր հետ տանելով Սպարապետի դին: Ծանապարհին բախվում, կռվում է դարանակալած պարսկական զորքերի դեմ: Արցախ հասնելուն պես իշխանը և նրա զինվորները Դահրավ գյուղի մոտ գտնվող Շնաքար լեռան մոտից ձգվող Քշմրոր անտառի մթին անկյուններից մեկում, գաղտնի մի տեղ՝ ժայռի տակ անփոփում են սպարապետի դին: Պարսից արքան չկարողանալով կոտրել արցախցիների դիմադրությունը՝ որոշում է առերես մոգություն ընդունած, բայց հոգու խորքում քրիստոնյա մնացած Վաչեին նշանակել Աղվանքի թագավոր, որպեսզի հեշտությամբ կոտրի արցախցիների կամքը:

Շուտով Յազկերտը, Յայոց Արևելից Կողմանց թագավոր հռչակելով Տիգրունում ապրող Վաչե իշխանագին, նրան ուղարկում է Աղվանք՝ հեռահար նպատակներով:

Փաստորեն, մինչ Վաչագան թագավորի գահակալությունը, Յայոց արևելից Կողմանքում թագավորում է Վաչեն՝ Վաչագանի հորեղբայրը: Սակայն մի որոշ ժամանակ անց, նա հրաժարվում է թագից, աշխարհիկ կյանքից և իրեն նվիրում ճգնավորության: Ըստ պատմավեպում ներկայացրած ավանդության՝ Վաչե թագավորը մի Ավետարան վերցրած առանձնանուն է Շոշից ոչ հեռու մի գյուղում, և

որպես ճգնաժամի անցկացնում իր կյանքի մնացած օրերը: Դրա համար էլ այդ գյուղը կոչվեց Ավետարանոց, որն այսօր գտնվում է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում:

Նկատենք, հայոց Արևելքից Կողմանքի արքաների տիրակալման ժամանակագրական նույն հաջորդականությունը, տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձությունները, հայ-պարսկական, հայ-բյուզանդական բարդ ու հակասական փոխհարաբերություններն ու Վաչե թագավորի վարած պետականամետ քաղաքականությունը և ապա դրան հաջորդած Վաչեի՝ իրեն ճգնաժամությանը նվիրելու փաստը արժարժված են նաև Բ. Կարապետյանի պատմավեպում:

Փորձենք պարզել, թե Վաչեն ու Վաչագանը ո՞ր թագավորական արքայատոհմից են սերում: Այս հարցը վիճահարույց է և տարբեր պատմաբանների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվել: Որոշ պատմաբաններ համարում են, որ նա Աղվանից Արշակունիների տոհմից էր, այլ պատմաբաններ նրան Առանշահիկների շառավիղ էին համարում: Պատմաբան Զ. Սվազյանը իր «Աղվանից Վաչե Բ և Վաչագան Գ Բարեպաշտ արքաների դինաստիական պատկանելության մասին» (5) հոդվածում փորձում է պարզաբանել հենց այս խնդիրը: Պատմաբան Բ. Ուլուբաբյանը Վաչե Բ-ին ու Վաչագան Գ-ին դասում է Առանշահիկների շարքին:

Զ. Սվազյանը հերքում է Ուլուբաբյանի կարծիքը, այն համարում էղիչեի պատմագրության սխալ մեկնաբանման արդյունք:

Հիմք ունենալով Մովսես Կաղանկատվացու հիշատակումները՝ ահավասիկ. «Թիւ անուանցն յԱռանայ մինչև ցքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ. և զսոցայն ստոյգն թէ յորմէ տոհմէ են, չունին ասել: Եւ որք ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից տասն. անուանք են այսոքիկ. Վաչագան քաջ, Վաչէ, Ուռնայր, Յաւազան, Մերիաւան, Սատոյ, Ասայ, Եսվաղէն, Վաչէ, ապա բարեպաշտն Վաչագան՝ արքայ Աղուանից ...»: (6) Ուսումնասիրողները, հիմք ընդունելով Կաղանկատվացու այս հաղորդումը, ցույց են տալիս, որ Վաչեն ու Վաչագանը սերում են հայոց Արշակունիներից և Վաչեն իշխում էր Բուն Աղվանքում: Ըստ պատմաբան Սվազյանի՝ Աղվանների Արշակունիների դինաստիային հիմք է դնում Մասքթագ թագավոր Սանեսեանը՝ Սանատրուկը, որ հայոց Արշակունիների դինաստիայից Տիգրան Գ-ի ազգակիցն էր:

Ղազարոս Աղայանը Վաչե Բ-ին ու Վաչագանին համարել է Առանշահիկներ՝ հիմք ընդունելով Մովսես Խորենացու ներկայացրած փաստերը, քանի որ հեքիաթում նա Վաչեին ներկայացնում է որպես Հայոց Աղվանագ թագավորության արքա, ոչ թե Բուն Աղվանքի, իսկ Անահիտն՝ իր արքայական ծագումը թաքցնելով, ներկայացնում է որպես «Առանի դուստր»՝ հովվի հասարակ աղջկա կերպարով:

Զ. Խաչատրյանի պատմավեպից ակնհայտ է դառնում Վաչագանի Աղվանի Արշակունիներից սերված լինելու փաստը: Ըստ Հայկ Խաչատրյանի պատմավեպի՝ Վաչագանի հորական տատը՝ Էշխը, պարսկուհի էր, ով ընդունել էր քրիստոնեություն և սովորել հայերեն ու մինչև կյանքի վերջը ոչ միայն չէր դավաճանել հայերին, այլև մինչև Վաչագանի հասունանալն, ինքն էր տիրություն անում Հայոց Արևելքից Կողմանքում, քանի որ նրա թագավոր որդին՝ Վաչեն, հեռացել էր աշխարհիկ կյանքից և ճգնավորական դարձել, իսկ մյուս որդուն՝ Հազկերտին, չէր վստահում, որովհետև պարսկական անուն էր կրում: Էշխը նույնիսկ բանակն էր ղեկավարում ու հարկ եղած դեպքում իր տերության սահմանները ներխուժած պարսկական զորքին ետ քշում: Էշխին, Հայկ Խաչատրյանը ներկայացնում է որ-

պես ուժեղ, իշխող, տոհմական արժանապատվություն ունեցող, հայրենամկեր կնոջ կերպարի:

Իսկ ըստ Բ. Կարապետյանի՝ նրանք պատկանել են Վաչականյան տոհմին. «III դարի կեսից սկսած, Հայոց հյուսիսարևելյան կողմանքում շուրջ 280 տարի՝ Վաչական Քաջից սկսած, իշխում էր Վաչականյան տոհմը: Վաչականյան տոհմանունը պատմավեպի հերոսի անունից չէր կարող ծագել, -մեկնաբանում է հեղինակը,- քանի որ այս տոհմի թագավորների մեջ Վաչական Գ-ն նախավերջինն է՝ 11-րդը: Վաչականյան տոհմի մասին Կաղանկատվացին գրում է, որ չգիտե, թե որտեղից է ծագում այն: Սակայն հետագա խմբագիրը, որը հավանաբար Դասխուրանցին էր, գրում է, թե այն սերում է Առանշահիկներից»: (7) Նկատենք, Կարապետյանը իր գլխավոր հերոսին կոչել է Վաչական և ոչ թե ինչպես հայտնի է պատմագրությունից՝ Վաչագան: Հեղինակը այսկերպ է ստուգաբանում անձնանունը. «Վաչը նշում է տոհմի վաչկատուն, թափառական լինելը, իսկ երկրորդ մասը հայկական ընդունված «ական» վերջածանցն է, որը ցույց է տալիս տվյալ տոհմին պատկանելիությունը: Այս առումով, «ագան» վերջածանց գոյություն չի ունեցել, ու այն մատենագիրներից մեկի սխալմունքից է բխել ու շարունակվել: Իսկ ինչո՞ւ չուղղենք այդ սխալն ու տոհմին վերադարձնենք հայահունչ անունը»: (8) Այս փաստը թե ինչքանով է հավաստի, առայժմ թողնենք մի կողմ: Այժմ անդրադառնանք վերոնշյալ պատմավեպերում Վաչագանի կերպարի առավել խորքային բացահայտումներին:

Ուսումնասիրելով երկու պատմավեպերը՝ նկատելի է այդուհանդերձ դիպաշարային որոշ ընդհանրություններ Բ. Կարապետյանի պատմավեպի և Աղայանի հեքիաթի ու Հ. Խաչատրյանի պատմավեպի միջև: Այս առումով գրականագետ Սոկրատ Խանյանը իր «Բաց նամակ արծակագիր, հրապարակախոս Բակուր Կարապետյանին» նամակ-գրախոսականում գրել է. «Վաչագան Բարեպաշտի սիրո պատմությունը ներկայացնելու համար գրեթե նույնությամբ հենվել ես Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթի կառուցվածքին ու բովանդակությանը՝ միայն մեկ տարբերությամբ. քո վեպում Անահիտ անվան փոխարեն հնչում է Շուշան անունը»: (9)

Այնուամենայնիվ, պատմավիպասանին հաջողվել է յուրովի ներկայացնել Վաչագանի կերպարը՝ պատմավեպում, ընդգրկելով՝ նրա պատմանկությունը հայրենի գյուղում, ձիաորսը Կուր-Արաքսի տափաստանում, ուսումնառությունը Փուգարաց Աշուշա բղեշխի հիմնած դպրոցում, հանդիպումը Գյուտ կաթողիկոսի և Մովսես Խորանացու հետ, վերադարձը հայրենի եզերք, ավերված երկրի վերականգնումը, Վահան Մամիկոնյանի հետ զուգահեռ ապստամբությունը պարսից բռնակալության դեմ, պսակը Շուշանիկի հետ, Վաղարշակ արքայից արքայի կողմից թագադրվելը, հեթանոսական աղանդների դեմ պայքարը, դպրոցների ու եկեղեցիների հիմնումը, Սահմանադրական ժողովը, Եղիշա առաքյալի հուշակոթողը...

Այժմ դիմենք Հայկ Խաչատրյանի պատմավեպին: Այստեղ ներկայացված է, թե ինչպես Վաչագանը փոքրուց սովորում է բազմաթիվ արհեստներ՝ դուրգի՝ բրուտագործի, լկամի՝ սանձ պատրաստողի և այլն: Թագավոր դառնալով, նա ցերեկները երկիրն էր ղեկավարում, գիշերները կնոջ՝ Շուշանիկի հետ այգիներն էր մշակում:

Պատմական տարիքում երկրի գահը ստանձնելով, նա անընդհատ մտածում էր Մեծ Հայքին միանալու մասին: Նա քաջ գիտակցում էր, որ պետք է հզորացնել երկիրը: Դարձյալ ստեղծել Մեծ Հայքի թագավորություն:

Դրա համար նա առաջին հերթին արտաքսեց երկրի սրտում բուն դրած դյուրթողներին, գուշակներին, ցրեց աղանդները, որոնք օտարամույծ են և հայերի հա-

վատն էին խաթարում և ջլատում միասնականությունը: Դրանց մասին վկայում է նաև Կաղանկատվացին:

Վաչագան թագավորի հրամանով երկրում զարկ է տրվում ոչ միայն եկեղեցաշինությանը, այլև դպրոցաշինությանը: Տարվա օրերի թվով վանքեր ու կրթարաններ է հիմնում: «Ամմահանալ կարելի է նախ և առաջ հայերենի պահպանումով: Հային կարող է հավերժակյաց դարձնել միայն հայկական դպրոցը: Իր հողի վրա հայը հայի և Աստծո հետ պիտի խոսի միայն հայերեն: Ազգային ոգու ամենագոյեղ կրթատունը հայկական դպրոցն է», (10) - ասում է Վաչագանը:

Արքան հրովարտակ է արձակում, որով բոլոր ուսուցիչ-ճաբուներին աշխատավարձ էր նշանակում: Մինչ այդ Հայոց աշաարհի ոչ մի կողմում այդպիսի բան չէր եղել:

Կառուցվում է նաև Արցախի ամենամեծ քաղաքը՝ Վաչագան արքայի քաղաքամայրը՝ Գյուտականը (հեղինակի վկայությամբ՝ նրա ավերակները պահպանվել են այժմյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ և Մատաղիս գյուղերի գրեթե մեջտեղը, Թարթառ գետի ափին): Սակայն նոր կառուցվող մայրաքաղաքը սրբազործելու և անվանակոչելու համար սրբի մասունք էր պետք և արքան դիմեց Դարահոջ գյուղի երեց Մատթեին, ով Արցախ է բերել Գրիգոր Լուսավորչի մասունքները և գիտի, թե որտեղ է Լուսավորչի թոռան՝ սուրբ Գրիգորիսի գերեզմանը, այն Ամարասի եկեղեցու արևելյան մասում էր գտնվում, բացեցին գերեզմանը, մի մասը հանեցին, մնացածը թողեցին տեղում և դրա վրա արքայի հրամանով կառուցեցին մատուռ: Նորակառույց արքայանիստը սրբազործեցին այդ մասունքներով: Այստեղից էլ՝ քաղաքի անունը՝ Գյուտավան: Գյուտը հենց գտնված սրբի մասունքներն էին:

Պատմավեպում հետաքրքիր դրվագներ շատ կան, առանձնապես հետաքրքիր է Վահան Մամիկոնյանի այցն Արցախ, նրա հանդիպումը Վաչագան արքայի հետ: Իմաստությամբ է շաղախված նրանց խոսակցությունը՝ երկիրը հզորացնելու և պարսից լուծը վերջնականապես թոթափելու առումով:

Երկխոսությունների, մտորումների միջոցով առավել ընդգծվում է Վաչագանի ազգային մտածողությունն ու նրա զուտ մարդկային հոգեբանությունը: Հեղինակին հաջողվել է տարբեր հնարանքների ու լեզվական միջոցների դիմելով, ստեղծել հերոսի անհատակացված կերպարը: «Հերոսների լեզվի ոճավորումը, որը դժվարին ու բարդ գործ է, առավել կարևոր նշանակություն է ստանում պատմավեպերում, գրում է լեզվաբան Լ. Եզեկյանը, քանի որ սա նույնպես նպաստում է պատմական տվյալ ժամանակաշրջանի երանգավորմանը և նրան հատուկ կերպարների տիպականացման»: (11)

Մեջբերեն մի հատված, որտեղ առավել ընդգծվում են Վաչագանի՝ պետական առաջնորդի հայրենամներ պատգամներն ու պետականամետ դիրքորոշումը: Նա ասում է. «Հավերժականը ազգային ոգու կրակն է, որը յոթ բոց ունի՝ բնօրրան, մայրենի լեզու, պար, երգ, անձնանուն, գիր, պատմություն: Այս յոթով է պայմանավորված յուրաքանչյուր մարդու ազգային էությունը: Պահպանիր այս յոթը և կուզես յոթ դավանանք շալակիր՝ դու չես սայթաքի պատմության խաչուղիներում»: Ապա, շարունակելով, թափանցում է. «Բախտավոր չեղա ես՝ արու զավակ չթողնելով աշխարհի վրա: Ինձ կփոխարինի ժողովուրդը»: (12)

Նկատենք՝ եթե Աղայանի հեքիաթում Անահիտն է Վաչագանի խորհրդատուն, ապա Խաչատրյանի պատմավեպում արքայի առաջին խորհրդատուն թագուհին էր՝ Շուշանիկը:

Մի անգամ, երբ վարպետը տեսավ, որ արքան մի հսկա վիմաքար է շալակել, զարմացած հարցրեց, թե ինչու է, թագավոր լինելով հանդերձ, այդպես վարվում, պատշաճ չէ: Արքան նրան պատասխանում է. «Էյ, քարագործ, արքայությունը միայն վայելք չէ, այլև ծանր քար շալակել: Հենց որ վայելքս երկարում է քար եմ առնում ուսիս, որպեսզի ինքս ինձ հիշեցնեմ իմ մեծ հոգսերը»: (13)

Արցախի բոլոր վայրերն էլ սիրելի էին արքայի համար, բայց առանձնապես Ջրվշտիկ ջրվեժը նրան առավել էր գերում, այստեղ նա հաճախակի էր ներանձնանում, վայելում բնության հրաշքները: Ու պատահական չէ, որ այդ վայրում էլ նա կառուցել է Ջրվշտիկ վանքը: Վաչագանն իր շինարարական ծրագրերով շենացնում է երկիրը: Արքային ժողովուրդը տվել է Բարեպաշտ անունը, որովհետև անսահման բարեգործություններ էր անում, ունեւոր հոգևորականներից ու իշխաններից վերցնում է բաժանում էր ժողովրդին:

Պատմավեպում խոսվում է նաև արցախյան օդապարիկ մեծւյգների մասին, որոնք մեծ համբավ ունեին ոչ միայն տարածաշրջանում, այլև նրա սահմաններից դուրս: Արքան հաճախակի էր կազմակերպում ձիարշավներ: Բավական հետաքրքիր է նաև այն տեղեկությունը, ըստ որի առաջին թագավորները թագադրվել են մեծւյգների վրա: Այն ժամանակ մեծւյգը գահ էր:

Արքայի մտահոգությունների առանցքում տերության ներքին կյանքը կարգավորող օրենքներ հրապարակելն էր: Ըստ թագավորի՝ օրենքները պետք է արդար և արդարուսույց լինեն: Նա որոշում է հարցումներ անել գիտակ մարդկանց, յոթ անգամ չափել, մեկ անգամ կտրել: Այսպիսով, Վաչագան արքայի Աղվեն ամառանոցում հրավիրվում է ժողով: Այստեղ էին հավաքվել տերության հոգևոր և աշխարհիկ դասի բոլոր առաջնորդները, երևելի դեմքեր՝ քննարկելու օրենքները: Երկար քննարկումներից հետո ընդունվում են կանոնները, որոնք վավերացվում են Վաչագան արքայի և բոլոր ներկաների մատանի-կնիքով: Դրանք ընտանիքի, ամուսնության, հարկատվության, հոգևորականության, ծիսկատարությունների, օրինազանցությունների և այլնի մասին էին, որոնց միջոցով կարգավորվեց երկրի ներքին կյանքը: Ի դեպ, Վաչագան Բարեպաշտ արքայի հաստատած սահմանադրության բնագիրը պահպանվել է Մովսես Կաղանկատվացու երկասիրության մեջ, պատմավիպասանը դրանք գետեղել է նաև վեպում:

Պատմավեպը հագեցած է ժողովրդական իմաստախոսություններով, ավանդազրույցներով, որոնք ստեղծում են պատմական գուներանգ, առավել համոզիչ, հետաքրքրական, ճանաչողական և ուսուցողական դարձնելով երկը:

Վեպը ավարտվում է դրամատիկ տեսարանով՝ Վաչագան թագավորի անփառունակ վախճանով: Պարսից Կավադ թագավորի խարդավանքի զոհ են դառնում թագավորն ու իր ընտանիքը:

Վաչագան արքայի դին Սյունիքից բերում են Արցախ և ամփոփում Ջրվշտիկ վանքում:

«Վաչագանից հետո Արցախը, Ուտիքը և Կամբեճանը թագավոր չունեցավ: Բայց Վարդան Մանիկոյանի, Բակի, Վաչեի և Վաչագան Բարեպաշտի ազատատենչ ոգին թագադրեց հայոց լեզուն և հայաշունչ դարձրեց Արցախամուր աշխարհի դարերի ու հազարամյակների բոլոր օրերը», (14)- այս տողերով է եզրափակվում վեպը:

Անկախ ամեն ինչից, պատմավիպասաններին հաջողվել է վարպետությամբ գեղարվեստականացրել ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններն ու այդ համապատկերի վրա ներկայացրել Վաչագան թագավորի հերոսա-

կան կերպարը: Վիպական տիրույթ բերելով Վաչագանին՝ երկու հեղինակներն էլ մատնանշում են այն քաղաքական, իրավական, հոգևոր-մշակութային բազմաթիվ գործոնները, որոնց շնորհիվ Հայոց Արևելից Կողմանքում ստեղծվում է անառիկ, կենտրոնաձիգ թագավորություն:

Այժմ անդրադառնանք Վարդան Հակոբյանի կերտած Վաչագանի կերպարին՝ էպիկական կտավի համապատկերում: Հատկանշական է այն իրողությունը, որ Վ. Հակոբյանը «Տաճարն Աստծո» վիպերգը գրել է Արցախի համար արյունոտ ու ծանր մի ժամանակաշրջանում, երբ անհրաժեշտ էր ժողովրդին ոգևորել: Գրականագետ Ս. Սարինյանը գրում է. «Ստեղծագործական մի իսկական սխրանք է Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» վիպերգը՝ անկրկնելի ոչ միայն իբրև մտահղացում, այլ որպես ժանրային ձևույթ: Տիեզերքի, պատմության մի գեղեցիկ բանահյուսություն է դա, որ դիցաբանական արխետիպերի և պատմության դարերի վրա ուրվագծում է Արցախի լեզենդը, ուր Գերագույն Ոգին ճշմարտության, Փրկության, Ազատության, Հավիտենության խորհրդով զորավիգում է արցախցու հավատը... Հիրավի այդպես, քանզի՝ «Աշխարհում գեղեցիկ ու չքնաղ շատ աշխարհներ կան, բայց ոչ մեկը Արցախ չէ: Արցախի սերը՝ տաճար է աստվածային»» (15)

Պատմական իրադարձություններին ու կոնկրետ իրողություններին դիմելով՝ բանաստեղծը լուծում է արդիական խնդիրներ, որոնք ուղիղ գծով առնչվում են արցախյան ազատամարտին: Վիպերգում հեղինակը Վաչագան Բարեպաշտի կերպարում ներկայացնում է Արցախի նորօրյա պայքարում խիզախող հերոսական արցախցիներին: Երկում բանաստեղծական բարձր վարպետությամբ են միահյուսված պատմությունն ու առասպելականությունը: Պոեմում նկատելի են անախրոնիզմի դրսևորումներ, մանավանդ այն պատկերում, երբ երկխոսության մեջ են մտնում Վաչագան Բարեպաշտն ու Վարդան Հակոբյանը: Վիպերգում հեղինակը դիմում է հետաքրքիր հնարանքի, նա 1500 տարի հետո Վաչագանին նամակ է գրում, որտեղ ասում է.

Քեզանից հետո տվին երկիրը,
Վաչագան արքա,
տվին մաս առ մաս,
մազ առ մազ,
ծախեցին հաճախ
ու «ոտքի կոխան դարձրին ամենքի»,
ամեն քոչվորի,
և Վարարակնը
ողբ է՝ Ջրվշտի՝ք... (16)

Բանաստեղծն իր բողոքի, անհանդուրժողականության ծայրն է բարձրացնում: Արցախի պատմությանը խորագիտակ բանաստեղծն ափսոսանքի խոսք է ուղղում Բարեպաշտին.

Ինչու, ինչու...
մոռացար հաճախ,
որ
այդ բողբոջում գրերի կողքին՝
դրանք պահելու, փրկելու համար
թողնել
պատկերը լարված նիզակի,
Նիզակն Առանի: (17)

Հիրավի, մեր գրողներին հաջողվել է կերտել Վաչագան Բարեպաշտի հերոսական կերպարը: Դարերից հառնող պետականամետ, օրինապաշտ ու բարեպաշտ

Վաչագան արքայի կերպարն իր ուրույն հետազոծման ունի մեր ժողովրդի տարեգրության մեջ:

ՃԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1970, էջ 178:
2. Н.К.Гейн, Время и пространство в структуре произведения, Москва, 1998.
3. Բակուր, Վաչական Բարեպաշտ թագավոր, ՀԳՄ հրատ., Երևան, 2018:
4. Ազատ Արցախ, 15 դեկտեմբերի, 2016:
5. Lraber.asj-oa.am
6. Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատուացի), քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Ե., 1983, էջ 41:
7. Գրական թերթ, 01.06.2018թ.:
8. Նույն տեղում:
9. Գրական թերթ, 18.05.2018:
10. Խաչատրյան Հ., Վաչագան, «Ձանգակ» հրատ., Երևան, 1998, էջ 158:
11. Լ. Եգեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2006թ:
12. Խաչատրյան Հ., Վաչագան «Ձանգակ» հրատ., Երևան, 1998, էջ 248:
13. Նույն տեղում, էջ 155:
14. Նույն տեղում, էջ 297:
15. Հակոբյան Վ., Մենարան, Երևանի համալսարանի հրատ., 1996, էջ 4:
16. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Գ, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, էջ 255:
17. Նույն տեղում, էջ 257:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՎԱՇԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ԿԵՐՊԱՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայոց Արևելից Կողմանքի հզոր արքաներից էր Վաչագան Բարեպաշտ թագավորը, որը թագավորել է 5-րդ դարի վերջում և 6-րդ դարի սկզբում՝ ստեղծելով հայկական մի փոքրիկ թագավորություն, որն իր գոյությունը մշակույթային, կրթական, իրավական ու շինարարական վերելքով:

Հոդվածագիրը Վաչագան թագավորի կերպարը ներկայացրել է ոչ միայն V դարի հայ պատմագրության համատեքստում, այլև գեղարվեստական երկերի զուգահեռներում: Հոդվածում քննության են առվել Հայկ Խաչատրյանի «Վաչագան», Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» և Բակուր Կարապետյանի «Վաչական Բարեպաշտ թագավոր» երկերը, որոնցում հաջողվել է վարպետությամբ գեղարվեստականացնել ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններն ու այդ համապատկերի վրա ներկայացնել Վաչագան թագավորի հերոսական կերպարը:

Հիրավի՝ մեր գրողները յուրովի կերտել են Վաչագան Բարեպաշտի կերպարը՝ ընդգծելով նրա ազգային մտածողությունն ու զուտ մարդկային հոգեբանությունը: Դարերից հառնող պետականամետ, օրինապաշտ ու բարեպաշտ Վաչագան արքայի կերպարն իր ուրույն հետազոծման ունի մեր ժողովրդի տարեգրության մեջ:

РЕЗЮМЕ

ОБРАЗ ЦАРЯ ВАЧАГАНА БАРЕПАШТА В
ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ

АМАЛЯ ГРИГОРЯН

Ключевые слова: историческая летопись, исторический образ, охудожествление, сказка, исторический роман, историческая поэма, исторический колорит, сюжет, эпический, мифы, типология образов, языковая стилистика.

Одним из великих царей Восточной Армении был Вачаган Барепашт, который правил в конце V и в начале VI в, создавая одно маленькое царство, которое свое существование обозначило культурным, образовательным, юридическим и строительным подъемом.

Автор статьи представил образ царя Вачагана не только в историческом армянском контексте V в, но и в параллелях художественных сочинений. В статье исследовались сочинения Айка Хачатряна "Вачаган", Вардана Акопяна "Храм Божий", Бакура Карапетяна "Царь Вачаган Барепашт", в которых мастерски удалось охудожествить историко-социологические события времени и на этой основе представить героический образ царя Вачагана.

Конечно, наши писатели по-своему изобразили образ Вачагана Барепашта, подчеркивая его национальное мышление и его человеческую психологию. Примерный образ царя Вачагана Барепашта, приходящий из веков, имеет особый след в летописи нашего народа.

SUMMARY

THE IMAGE OF VACHAGAN BAREPASHT IN FICTION

AMALYA GRIGORYAN

Key words: historiography, historical character, artisticization, fairytale, novel, historian, historical colour, range of events, epic, linguistic style, typification of image.

Vachagan Barepasht was the king of the Eastern of Armenia, who reigned from the end of the 5th century till the beginning of the 6th century, making a small kingdom which was marked with its educational, legal and cultural rise.

The author of the article represents the image of King Vachagan not only in the historiography of the 5th century, but in the parallels of fictions as well. In this article are examined Hayk Khachatryan's "Vachagan", Vardan Hakobyan's "The Temple of God" and Bakur Karapetyan's "King Vachagan Barepasht" in which they could successfully artisticize the historical events and on this picture show the heroic image of Vachagan Barepasht.

Our writers create the image of Vachagan Barepasht underlining his national mentality and his human psychology.

The image of pious, law-abiding King Vachagan has its unique place in the history of our people.